ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆ

ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ

Վեդի քաղաքի գրադարանում կատարված աշխատանքների
հաշվետվություն

Վեդի քաղաքի գրադարանը 2018 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ունի

Ընթերցող-2548
Հաճախում -16050
Գրքատացք -39760

Տարվա ընթացքում ձեռք է բերվել 52 կտոր նոր լույս տեսած գրականություն, ինչպես նաև 12 կտոր նվիրատվություն:

Բյուջեով նախատեսված 8400.0 դրամ գումարից՝

աշխատավարձը կազմել է 6977.4
Էլ. ծախս-77.0
Հեռ., ինտերնետ- 161.2
Մեք. սարք.-20.0
Գրասենյակ. գույք.-25.0
Հատուկ նպ. նյութ. 250.0

Բաժանորդագրվել ենք 6 անուն պարբերականի: Դրանք են՝ <<Հայաստանի Հանրապետություն>> , <<Կրթություն>> , <<Իրավունք>>, <<Անկախ>>, <<Տնային առողջարան>> և << Արարատ>>:

Բացվել են տաս ցուցահանդեսներ. <<Մուշեղ Գալշոյան 85>>, <<Խաժակ Գյուլնազարյան 100>>, <<Պերճ Զեյթունցյան 80>>, <<Զորայր Խալափյան 85>>, <<Մետաքսե 90>>, <<Ալեքսանդր Շիրվանզադե 160>>, <<Վիլյամ Սարոյան 110>>, <<Գևորգ Արշակյան 90>>, <<Սարդարապատի հերոսամարտ 100>>, <<Հավերժի ճամփորդը>> (նվիրված Շառլ Ազնավուրի հիշատականին):

Վեդի քաղաքի գրադարանում աշխատանքային պլանով նախատեսված 34 միջոցառումից անցկացվել են 25-ը:Մանկական գրադարանում նախատեսված 35-ից անցկացվել են 27-ը:

Կազմակերպված միջոցառումներից են <<Ես եմ>> ծրագրի առանձնահատկությունները (նվիրված հայկական բանակի օրվան), <<Սուրբ Սարգսի տոնը>> (երիտասարդների օրհնության օրվան նվիրված), <<Տեառնընդառաջ>> (նորապսակների օրհնության օրվան նվիրված) , <<Գիրք նվիրելու օրը>>, <<Կանանց միջազգային օրը>>, <<Սուրբ Զատիկ>>, <<Սարդարապատի հերոսամարտը>>, <<Մեր պետական խորհրդանշանները>>, <<Ազատ, անկախ Հայաստան>>, <<Գրադարանավարի օրը>>, <<Թարգմանչաց տոնը>>, <<60 տարի գրքի հետ>>, 10 միջոցառում նվիրված գրողների հոբելյաններին և այլն:

Ամբողջ աշխատակազմով վերադասավորել ենք գրքային ֆոնդը, դասավորել և խմբագրել են Այբբենական և Կարգային գրացուցակները:

Գրադարանը ունի ջեռուցման, ինչպես նաև վերանորոգման խնդիր: